ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 դեկտեմբերի 2013թվականի N 21

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով *ավագանին որոշեց՝*
Հաստատել հետևյալ օրակարգը

1. Բաղրամյան համայնքի վարչական տարածքում 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:
2. 2014 թվականի համայնքի ղեկավարի աշխատավարձի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի, համայնքի մսուր-մանկապարտեզի ՀՈԱԿ վարչատնտեսական անձնակազմի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
3. Բաղրամյան համայնքի գյուղապետարանի աշխատակազմում հավելավճարի կիրառման կարգը և չափը հաստատելու մասին:
4. Բաղրամյան համայնքի ավագանու 23.11.2012թ. թիվ 15 որոշման մեջ լրացում կատարելու մասին:
5. Բաղրամյան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին ձևավորելու մասին:
6. 2014թ-ի համայնքի մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ծնողական գումար սահմանելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՋՈՀՐԱԲՅԱՆ ՍՈՒԼԻԿՈ

ՄԱԹԵՈՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 դեկտեմբերի 2013թվականի N 22-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10, 11 և ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետի պահանջով *ավագանին որոշում է՝*

Սահմանել Բաղրամյան համայնքի 2014թ. Տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության կառույցների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված կառույցների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող կառույցների համար՝ 15000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող կառույցների համար՝ 25000 դրամ.

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող կառույցների համար՝ 30000 դրամ

բդ) 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող կառույցների համար՝ 40000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող կառույցների համար՝ 1500 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող կառույցների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ

կառույցների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով կառույցի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝մինչև 1500 դ.
բ) բացի կառույցի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով կառույցի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ կառույցի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի համար կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ կառույցների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:
1-3 կետերի համար կիրառված է 0,5 գործակիցը
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.
5. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ 10 դրամ.
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ:
գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 30000 դրամ:
6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.
բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.
գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ
ե/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ

9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

10. Համայնքի տարածքում /բացառությամբ թաղային համայնքների/ մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար սահմանել 3000 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1.Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

2. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

3. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում աղբահանության վճարը սահմանել՝
ա/ Կենցաղային աղբի համար՝ յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 10/տաս/ դրամ:
բ/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1500/մեկ հազար հինգ հարյուր/ դրամ, կամ ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար՝ 5000/հինգ հազար/ դրամ:
գ/ աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը համարել օրացուցային ամիսը: դ/ Անշարժ գույքի սեփականատիրոջ՝ ցանկացած հիմքով փոփոխության դեպքում, նոր սեփականատիրոջն է անցնում աղբահանության վճարի գծով նախկին սեփականատիրոջ չկատարած պարտավորությունը կամ գերավճարի իրավունքը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՌԼԵՆ

2. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՍՈՒԼԻԿՈ

3. ՄԱԹԵՈՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

4. ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

5. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 դեկտեմբերի 2013թվականի N 23-Ն

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ,ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ և 32-րդ հոդվածի 1-ին <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասերով

1. Հաստատել 2014թ.համայնքի ղեկավարի աշխատավարձի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել 2014թ. համայնքի մսուր- մանկապարտեզ ՀՈԱԿ վարչատնտեսական անձնակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՌԼԵՆ
2. ՋՈՀՐԱԲՅԱՆ ՍՈՒԼԻԿՈ
3. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
5. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

Հավելված՝ 1
Բաղրամյան գյուղական համայնքի
ավագանու 2013թ. դեկտեմբերի 6-ի N 23-Ն որոշման

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ , ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 14
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
Քաղաքական պաշտոն		
Համայնքի ղեկավար		175,0 հազար դրամ
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	94,0
Համայնքի ղեկավարի օգնական	1	63,0
Համայնքային ծառայության պաշտոններ		
Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	126,0
Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	118,0
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	117,0
Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	91,0
Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	84,0
Քաղաքացիական աշխատանք		
Հարկահավաք	1	73,0
Մշակույթի տան տնօրեն	1	59,524
Գրադարանավար	1	59,524
Գեղմասվար	1	59,524
Տեխսպասարկման անձնակազմ		
Հավաքարար	1	70,0
Պահակ	1	59,524

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

Հավելված՝ 2
Բաղրամյան գյուղական համայնքի
ավագանու 2013թ. դեկտեմբերի 6-ի N 23-Ն որոշման

ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ 2014Թ. ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
Տնօրեն	1	121,0 հ.գ
Դաստիարակ	2	238,096
Դաստիարակի օգնական	2	119,048
Խոհարար	1	66,0
Լոգոպետ	1	59,524
Լվացքարար	1	59,524
Դոնապահ	1	62,0
Բուժքույր	1	59,524
Երաժշտության դաստիարակ	1	59,524
Հաշվապահ	1	59,524
Պահակ	1	59,524

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ